ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
**Ա Ր Ա Ր Ա Տ Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**ք.Արփաշատ**

N 329 -Ա

„24" օգոստոսի 2026թ.

## ԿԱՐԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթն անցկացնելու նպատակով մասնագիտական հանձնաժողովի նիստի թիվ 878 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2026 թվականի օգոստոսի 24-ից Կարինե Սիմոնյանին նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն և կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով՝ 1 տարի փորձաշրջանով:

2. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Սիմոնյանի աշխատանքները գնահատելու նպատակով՝ փորձաշրջանի ղեկավար նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նելլի Ջիրոյանին :

8/24/2026

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ